

**Հայ-Ռուսական
համալսարանի ՀՀ ԲԿԳԿ-ի
իրավագիտության 063 մասնագիտական խորհրդին**

(Հասցե 0051, Հայաստանի
Հանրապետություն, ք. Երևան, Հովսեփ Էմինի
փողոց, 123)

20.05.2024

ԿԱՐԾԻՔ

**պաշտոնական ընդդիմախոս, իրավաբանական
գիտությունների թեկնածու, Հայկ Գևորգի Մալխասյանի**

**Գարիկ Սեյրանի Գևորգյանի իրավաբանական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման «ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔՆ ՈՒՐԻՇԻ ԱՊՕՐԻՆԻ
ՏԻՐԱՊԵՏՈՒՄԻՑ ՀԵՏ ՊԱՀԱՆՋԵԼՈՒ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ» թեկնածուական ատենախոսության վերաբերյալ**

ԺԲ.00.03 – Մասնավոր իրավունք (քաղաքացիական, առևտրային, միջազգային մասնավոր, ընտանեկան, աշխատանքային իրավունք, սոցիալական ապահովության իրավունք) մասնագիտությամբ.

Թեկնածուական ատենախոսության շրջանակներում հրապարակային պաշտպանությանը ներկայացված Գարիկ Գևորգյանի գիտական ուսումնասիրությունը նվիրված է Անշարժ գույքն ուրիշի ապօրինի տիրապետումից հետո պահանջելու ինստուտուտի ուսումնասիրությանը: Ընտրված թեմայի արդիականությունը կասկած չի հարուցում, քանի որ այն հոռմեական իրավունքից ի վեր մինչ ժամանակակից իրավական համակարգեր հանդիսանում է իրային իրավունքների պաշտպանության կարևորագույն մեխանիզմներից մեկը: Բացի այդ, ՀՀ ժամանակակից իրավական համակարգի առանձնահատկություններով պայմանավորված կարևոր է աշխատանքում դատական և այլ իրավակիրառ

պրակտիկայի, իրային իրավունքների պաշտպանության այլ գործիքակազմերի և վինդիկացիոն հայցի համադրությունը և համալիր ուսումնասիրությունը, ինչին նվիրված է աշխատանքի զգալի մասը:

Թեկնածուական ատենախոսությունը և նրա սեղմագիրը բովանդակային և կառուցվածքային առումով, համապատասխանում են նման աշխատանքներին ներկայացվող պահանջներին այն պատրաստված է թեմային առնչվող հիմնական աղբյուրների վերլուծության հենքով:

Գիտական աշխատությունը կազմում է 188 էջ, բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, որոնք բաժանված են իննը պարագրաֆների, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից:

Ներածության մեջ հիմնավորված է ընտրված թեմայի արդիականությունը, հետազոտության տեսական և մեթոդաբանական հիմքերը, ներկայացված են հետազոտության նպատակը և խնդիրները, հետազոտության օբյեկտը և առարկան, հետազոտության փորձառական հիմքերը: Բացի այդ, ներածության մեջ հիմնավորված է նաև աշխատանքի գիտական նորոյթը և պաշտպանության ներկայացվող դրույթները:

Ատենախոսության առաջին գլխում (էջեր՝ 13-80) հեղինակի կողմից ուսումնասիրվել է ուրիշի ապօրինի տիրապետումից անշարժ գույքի հետ պահանջելու առանձնահատկությունները ՀՀ-ում, այդ թվում կատարվել է այդ ինստիտուտի էության բացահայտմանը, քննարկվել են անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի վերականգնման արտադատական մեթոդները, վինդիկացիոն հայցի բավարարման համար անհրաժեշտ պայմանները և հայցային վաղեմության ինստիտուտի կիրառման հիմնախնդիրները:

Ատենախոսության երկրորդ գլխում (էջեր՝ 81-106) ուսումնասիրված են ուրիշի ապօրինի տիրապետումից անշարժ գույքի հետ պահանջելու հայցը բավարարելու մասին դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռի կատարման հիմնախնդիրները:

Գիտական աշխատության երրորդ գլխում (էջեր՝ 107-171) հեղինակի կողմից կատարվել է ուրիշի ապօրինի տիրապետումից անշարժ գույքի հետ պահանջելու հայցի և հարակից մի շարք իրավական ինստիտուտների համադրմանը, այդ թվում

պայմանագրային, պայմանագրի անվավերության և այլն:

Թեկնածուական **ատենախոսության** **բովանդակությունը** համապատասխանում է աշխատանքի կառուցվածքին և ընտրված թեմային: Հետազոտության արդյունքում կատարված եզրահանգումները գիտականորեն հիմնավորված են և համարժեքորեն փաստարկված: Դրանք վստահաբար ունեն ինչպես տեսական, այնպես էլ ընդգծված գործնական նշանակություն, քանի որ կարող են օգտագործվել թե՛ քաղաքացիական օրենսդրության կատարելագործման և թե՛ իրավակիրառական պրակտիկայի զարգացման գործում:

Հատկապես կարևոր է ընդգծել այն, որ հեղինակը կատարել է համալիր հետազոտություն, անդրադարձ կատարելով ոչ միայն վինդիկացիոն հայցի, այլ նաև դրան հարակից քաղաքացիաիրավական, քաղաքացիադատավարական և վարչաիրավական ինստուտիտներին՝ քննարկելով դրանց հիմնախնդիրները՝ որպես խնդիրների ամբողջություն: Հատկապես գովելի է նաև կատարված դատական պրակտիկայի խորը ուսումնասիրությունը:

Չնայած այն բանին, որ աշխատանքը կատարվել է բավականին բարձր մակարդակով, այնուամենայնիվ աշխատանքում կան դրույթներ, որոնք վիճահարույց են:

Առաջին. Հեղինակի կողմից պաշտպանության հանվող երրորդ դրույթի ձևակերպումները, կարծում ենք, հստակեցման կարիք ունեն: Մասնավորապես ատենախոսության ութերորդ էջում նշված է, որ «*եթե կադարողական վարույթի շրջանակներում պարզվի, որ իրը փրապետում են այլ անձինք, ապա վերծիններս պետք է հայցվորի միջնորդությամբ դադարանի որոշմամբ ներգրավվեն կադարողական վարույթում՝ իրավահաջորդության կարգով:*» Նման ձևակերպումից անհասկանալի է, թե ինչու պետք է գործին մասնակից չդարձած և հետևաբար իր դատավարական իրավունքների իրացման հնարավորություն չունեցած անձը ներգրավվի կատարողական վարույթում և հատկապես, որպես այլ անձի իրավահաջորդ: Այս առումով կարևոր է հաշվի առնել, որ այդ երրորդ անձինք կարող են նաև լինել օրինական տիրապետողներ և հետևաբար նշված դրույթը հստակեցման կարիք ունի:

Երկրորդ. Հեղինակը պաշտպանության հանվող յոթերորդ դրույթում (10-րդ

էջ) նշել է, որ «Կարծում ենք, որ վինդիկացիոն հայցը չի հանդիսանում անշարժ գույքի նկատմամբ իրավունքների իրավական պաշտպանության արդյունավետ միջոց, որը կարող է ապահովել խախտված իրավունքների իրական վերականգնումը, քանի որ Հայաստանի պոզիտիվ օրենսդրությունը թույլ է տալիս դատական ակտերի հարկադիր կատարողների՝ անշարժ գույքի բնագանձման վերաբերյալ դատարանի վճռի կատարմանը ուղղված գործողությունների/որոշումների բողոքարկում վարչական դատարան: Իսկ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածը վարչական դատարանին լիազորում է կասեցնել դատարանի որոշման կատարումը մինչև գործի լուծումը վարչական դատարանում, ինչը մենք համարում ենք հակասահմանադրական:»

Թեև հետագա դրույթի տեքստում և աշխատանքի տեքստում ընդհանուր առմամբ հեղինակն ուրվագծել է խնդրի ավելի նեղ շրջանակ և հեղինակի գնահատմամբ խնդրահարույց այս ինստիտուտի սահմանափակման առաջարկներ, այնուամենայնիվ դրույթի նման ձևակերպումները համարում ենք խնդրահարույց՝ հաշվի առնելով այն հանագամանքը, որ դատական ակտերի հարկադիր կատարումը հանդիսանում է ինքնուրույն վարչական վարույթի տեսակ, որի շրջանակներում կարող են տեղի ունենալ անձի՝ այդ թվում պարտապանի իրավունքների խախտումներ, որոնց կանխարգելումը կարևոր նշանակություն ունի օրինականության սկզբունքի, ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված արդար դատաքննության և դատարանի հասանելիության իրավունքների իրականացման տեսանկյունից:

Հարկ է նաև նշել, որ նման նեղ խնդիրների հիման վրա չի կարելի պնդել, որ վինդիկացիոն հայցը չի հանդիսանում անշարժ գույքի նկատմամբ իրավունքների իրավական պաշտպանության արդյունավետ միջոց:

Բացի այդ հեղինակն ինքն աշխատանքի տեքստում (105-րդ էջ) թույլատրելի է համարում նման իրավիճակներում վարչական դատարանի կողմից վարչական ակտի կատարման կասեցման մասին որոշման կայացումը՝ կախված գործի հանգամանքներից, սակայն պաշտպանության հանվող դրույթում առաջարկում է նման հնարավորությունը բացառել: Այս առումով հարկ ենք համարում նաև մատնանշել ՀՀ Սահմանադրական դատարանի 27 հունիսի 2023 թվականի

ՍԴԱՌ-69 աշխատակարգային որոշումը, որով կարճվել է հեղինակի կողմից մատնանշված (12-րդ էջ) 07.03.2023թ. ՍԴԴԿՌ-9 որոշմամբ վարույթ ընդունված գործի վարույթը: Թեև գործի վարույթը կարճվել է այլ հիմքով, այնուամենայնիվ հատկանշական է, որ նմանատիպ իրավիճակում ՀՀ Սահմանադրական դատարանն նշել է, որ «Ինչ վերաբերում է դիմողի այն պնդմանը, ըստ որի՝ «նոր ծագած վարչական վեճի քննությունը կարող է հանգեցնել նույն հարցի երկրորդ անգամ քննությանը, որն արդեն իսկ քննվել է քաղաքացիական գործով», Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ այն ակնհայտորեն հերքվում է քննության առարկա դիմումի ներկայացման համար հիմք հանդիսացող կոնկրետ վարչական գործի նյութերի, մասնավորապես՝ տվյալ գործով հայցի հիմքերի եւ հիմնավորումների ուսումնասիրությամբ...», ինչը կրկին հարցականի տակ է դնում առաջարկվող՝ կասեցման միջոցի կիրառման արգելքի հիմնավորվածությունը:

Երրորդ. Նմանատիպ խնդիր ենք տեսնում նաև պաշտպանության հանվող ութերորդ դրույթի երկրորդ պարբերության հետ: Մասնավորապես հեղինակի կողմից առաջարկվում է սահմանել, որ «երրորդ անձանց վրա ազդող» և օրենքի հակասող գործարքները պետք է օրենսդրի կողմից սահմանվեն որպես առ ոչինչ: Թեև նման առաջարկը կարող է հիմնավորված լինել, այնուամենայնիվ նման ընդհանրական և լայն առաջարկը, կարծում ենք, չպետք է հիմնվի զուտ վինդիկացիոն հայցի կիրառման մասնավոր դեպքի վրա և պետք է հիմնված լինի օրենքին հակասող գործարքների անվավերության հարցի համալիր ուսումնասիրության վրա:

Չորրորդ. Հեղինակն աշխատանքի 112-րդ էջում հակիրճ անդրադարձ է կատարել վարձատուի և վարձակալի միջև վեճերի դեպքում վինդիկացիոն հայցի կիրառելիության հայցին, նշելով, որ վարձակալության պայմանագրի լուծման դեպքում վարձակալության առարկա գույքի վերադարձման պահանջելու դեպքում կիրառելի են պայմանագրային պայմաններ: Այնուամենայնիվ աշխատանքում բավականաչափ հիմնավորված չէ նման մոտեցման կիրառելիությունը և հստակ չէ, թե արդյոք դա բացառում է իրային-իրավական պաշտպանության միջոցի կիրառման հնարավորությունը:

Նշված նկատառումները, սակայն, չեն նսեմացնում հեղինակի կողմից

կատարված հետազոտությունը, այն հանդիսանում է ինքնուրույն գիտահետազոտական աշխատանք, որում լուծվել են այնպիսի խնդիրներ, որոնք կարևոր նշանակություն ունեն քաղաքացիական իրավունքի զարգացման համար:

Եզրակացություն: Գարիկ Սեյրանի Գևորգյանի իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման «ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔՆ ՈՒՐԻՇԻ ԱՊՕՐԻՆԻ ՏԻՐԱՊԵՏՈՒՄԻՑ ՀԵՏ ՊԱՀԱՆՋԵԼՈՒ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ» թեկնածուական ատենախոսությունը ինքնուրույն, ավարտուն, արդիական, նորույթ պարունակող համալիր գիտական ուսումնասիրություն է, որը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թվականի օգոստոսի 8-ի թիվ 327 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանների շնորհման կարգի» պահանջներին:

Ատենախոսության հեղինակն արժանի է ԺԲ.00.03 – Մասնավոր իրավունք (քաղաքացիական, առևտրային, միջազգային մասնավոր, ընտանեկան, աշխատանքային իրավունք, սոցիալական ապահովության իրավունք) մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Պաշտոնական ընդդիմախոս՝
իրավաբանական գիտությունների թեկնածու

Հ.Գ. Մալխասյան

Հ.Գ.Մալխասյանի ստորագրությունը
հաստատում եմ՝

Հայ-Ռուսական համալսարանի
Գիտական քարտուղար՝
Բ.Գ.Թ.



Ռ.Ս.Կասաբաբովա